

# **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐԱՆ**

## **ԱԼԻԿ ՎԱՐԴԻ ՀԱԿՈԲՅԱՆ**

**ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱՐՏԱՐԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԹՈՒՄ  
(Ֆրանսերեն նյութի հիման վրա)**

**Ժ.02.08 - «Ռոմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2015**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

մ.գ.թ., դոցենտ Զ. Հարությունյան

Պաշտոնական ընդրիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Բարլեզիջյան

բ.գ.թ. Գ. Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան պետական  
մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. փետրվարի 18-ին, ժամը 11-ին, ՀՀ ԲՈՆ-ի՝ ԵՊՃ-ում գործող 009 «Օտար լեզուներ»  
մասնագիտական խորհրդի նիստում:


Դասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան 1

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՃ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. հունվարի 17-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
բ.գ.դ, պրոֆեսոր՝

Ե.Լ. Երգնևյան



Սույն ատենախոսությունը նվիրված է քաղաքական խոսույթի համատեքստում փաստարկման դրսեւորումների առանձնահատկությունների ու քաղաքական խոսույթին բնորոշ փաստարկման լեզվարտահայտչամիջոցների ուսումնաայի ությանը:

**Թեճայի արդիականությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ, պատկերավոր կերպով ասած, այսօր առավել, քան երեւէ, աշխարհում պատերազմներն ավելի շատ մղվում են տեղեկատվության, քան՝ մարտի դաշտում: Ակնհայտ է, որ ներկա աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում խոսք քաղաքական գործիչների համար հաղթանակի հասնելու կարեւորագույն միջոցներից է: Առանց ծիշտ եւ հիմնավորված փաստարկման, տեղեկատվական հոսքերի արդի պայմաններում, անհնար է պատկերացնել քաղաքական ելույթի արդյունավետությունը: Կենց այդ հանգամանքով էլ պայմանավորված է քաղաքական խոսույթում փաստարկման լեզվարտահայտչամիջոցների բնորոշյան արդիականությունը:

Քաղաքական ելույթներում փաստարկման լեզվարտահայտչական միջոցների վերհանումն ու հետազոտությունը եւ ցայսօր գիտության կողմից դեռեւս չարձանագրված լեզվարտահայտչամիջոցների հայտնաբերման եւ դասակարգման փորձը ատենախոսության գիտական նորույթն են: Աշխատանքում, ըստ էության, **առաջին անգամ** քննության են առնվում ֆրանսիական քաղաքական մտքին բնորոշ փաստարկման լեզվարտահայտչական միջոցները՝ հիմք ընդունելով փաստարկման վերլուծության ու գործարանության ֆրանսիական դպրոցի հիմնադրույթները:

Ատենախոսության ուղևորնային օբյեկտը քաղաքական խոսույթ, փաստարկում եւ փաստարկման լեզվարտահայտչամիջոցներ հիմնարար հասկացությունների քննությունն է: Աշխատանքի ուսումնաայի ության առարկան՝ քաղաքական խոսույթում փաստարկման լեզվարտահայտչամիջոցների առանձնահատուկ դրսեւորումների դիտարկումն ու վերլուծությունը:

Ատենախոսության **նպատակն** է կատարել փաստարկման ու քաղաքական խոսույթի տեսագործնական վերլուծություն, գործարանական հետազոտության ենթակել ֆրանսիացի քաղաքական գործիչների ելույթները՝ քննության առնելով դրանցում առկա փաստարկման լեզվարտահայտչամիջոցները:

Հաշվի առնելով ուսումնաայի ության նպատակը՝ ներ առջեւ դրել ենք հետեւյալ խնդիրները.

- քննության առնել փաստարկման տեսության հիմնադրույթները ինչպես լեզվաբանության, այնպես էլ հասարակական այլ գիտակարգերի տիրություն,
- վերլուծության ենթարկել «քաղաքական խոսույթ» հասկացությունը՝ մասնավորապես լեզվական առանձնահատկությունների տեսանկյունից,
- լեզվաբանական վերլուծության ենթարկել փաստարկումը քաղաքական խոսույթում,
- վեր հանել քաղաքական խոսույթին բնորոշ փաստարկման լեզվարտահայտչամիջոցները,
- դասակարգել քաղաքական խոսույթին բնորոշ փաստարկման լեզվարտահայտչամիջոցները:

Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են գործարանական վերլուծության այնպիսի **մեթոդներ**, ինչպիսիք են դեղուկտիվ, քաղադրիչային եւ համատեքստային մեթոդները:

**Ուսումնասիրության նյութը ֆրանսիայի 5-րդ հանրապետության նախագահների ելույթներն են:**

Աստեղ ախտոսության տեսական արժեքն այն է, որ հետազոտությունը նպաստում է արդի լեզվաբանության կարեւորագույն հիմնախնդիրներից մեկի խոսույթի վերլուծության դերի եւ նշանակության արժեւորմանը եւ նորովի մեկնաբանությանը: Աստեղ ախտոսությունը տեսական նշանակություն ունի նաև այն առունով, որ քաղաքական խոսություն փաստարկման լեզվարտահայտչամիջոցների վերհանումն ու մեկնաբանումը ենթադրում են համակողմանի լեզվաբանական վերլուծություն, որի արդյունքները կարող են նպաստել ոչ միայն գործարանության, այլև լեզվաբանության այլ գիտաճյուղերի տեսական հարցադրումների լուսաբանմանը:

Աստեղ ախտոսության գործնական արժեքն այն է, որ հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ոչ միայն փաստարկման տեսությանն ու տեքստի գործարանական վերլուծությանը նվիրված դասընթացներում, քաղաքական խոսությին ու փաստարկմանը վերաբերող նագիստրոսական ծրագրերում, դիպլոմային աշխատանքներում, այլև՝ քաղաքականության մեջ՝ քաղաքական գործիչների ելույթներում փաստարկային ներուժի մեջացման նպատակով:

Աստեղ ախտոսության կառուցվածքը պայմանավորված է հետազոտության նպատակով և խնդիրներով: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից եւ գրականության ցանկից:

**Ներածության** մեջ հստակեցվում են աստեղ ախտոսության թեման, ուսումնասիրության առարկան և օբյեկտը, աստեղ ախտոսության նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, կառուցվածքը, տեսական և գործնական արժեքները:

Աշխատանքի առաջին գլուխը («Փաստարկման տեսությունը եւ փաստարկման լեզվաբանական վերլուծության հիմքերը») բաղկացած է Երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում («Փաստարկման տեսությունը գիտության հարացույցում») վերլուծության են ենթարկվում տարրեր գիտականների կողմից առաջ քաշված «փաստարկում» հասկացության սահմանումները:

Փաստարկման խնդիրների նկատմամբ հետաքրքրությունը կտրուկ աճ արձանագրեց 20-րդ դարի 60-ական թվականներին: Այդ խնդրով մասնավորապես սկսեցին հետաքրքրվել այնպիսի գիտականներ, ինչպիսիք են Շ. Պերեմանը, Գ. Չոնսրունը եւ Ս. Տուլմինը: Փաստարկման վերաբերյալ արժեքավոր տեսակետներ են Երևակայացրել նաև Ռ. Բարին, Լ. Օլբրեխտս-Շտուկան, Զ. Վինյոն, Է. Բենվենիստը, Ժ-Ֆ. Գրիգոր, Ի. Յու. Լոգինովան, Գ. Ա. Բրուտյանը, Ա. Ա. Մարկովիչը եւ այլք: Սակայն լեզվաբանությունը մասնավորապես գործարանությունը, շատ ավելի ուշ է սկսել հետաքրքրվել փաստարկման հիմնահարցերով: Այս ենթագլխում նենք նաև քննության ենք առել փաստարկման գիտական ըմբռնման առավել վաղ ակունքները՝ տարրեր գիտաճյուղում: Վիլհելմի փաստարանություն, տրամաբանություն, հոգեբանություն, սոցիոլոգիա եւ հուստորաբանություն:

Դեռևս թ.Ա. 329-323 թթ-ին Արխստութելը առաջ է քաշում հռետորության իր մոտեցումը՝ ընդգծելով, որ խոսքի օգտագործման հնարավորությունը մարդուն տրվել է ազդեցություն գործելու համար: Արխստութելն առաջարկում է նոր գիտակարգ՝ տալով հետեւյալ սահմանումը. «յուրաքանչյուր հարցի համար սահմանել այն, ինչն ընդունակ է համացել»: Սիշել Մեյերն իր աշխատությունում Արխստութելի հռետորությունը համարում է նպատակների եւ միջոցների:

հարաբերության վերլուծություն՝ խոսքի միջոցով: Մեյերը համոզնունք է հայտնում, որ այն ուսումնասիրում է այն ձեւը, որով մարդիկ բանակցում են հեռավորության վրա՝ այդ հեռավորությունն ընդգծելու կամ նվազեցնելու համար (Meyer 1993:180)<sup>1</sup>:

Դասական հրետորությունը կամ հրետորության արհստոտելյան ավանդույթները հիմք են ծառայում նաև ժամանակակից հրետորության համար, չնայած որ ավելի ուշ շրջանի գիտնականները փորձում են նոր հայացք ուղղել հրետորության արվեստին, հետեւաբար եւ փաստարկմանը: Շ. Պերելմանի եւ Լ. Օլբրեխտս-Շտեկայի «Նոր հրետորաբանություն» աշխատության մեջ փաստարկումը սահմանվում է որպես «խոսքի տեխնիկա, որը թույլ է տալիս ձեւավորել կամ մեծացնել այն թեզերի համախնների թիվը, որոնք ներկայացվում են նրանց համաձայնությամբ» (Perelman et Olbrechts-Tyteca 1970:5)<sup>2</sup>:

Առաջին գլխի երկրորդ ենթակայում («Խոսքի ռազմավարությունը եւ փաստարկման տեսությունը») անդրադարձ է կատարվում «խոսքի ռազմավարություն» հասկացությանը եւ փաստարկման տեսությանը լեզվի մեջ:

Թե՛ դասական եւ թե՛ ժամանակակից հրետորության ուսումնասիրության հիմնական դաշտը խոսքի ռազմավարությունն է: Փաստարկմանը հետաքրքրվող գիտնականները ծանրակշիռ դեր են վերապահում խոսքի ռազմավարությանը փաստարկման տեսության մեջ, քանի որ այն ընդգծում է ասույթի խորքային մտքի դիմանմիկ բնույթը, որը հիմնվում է փաստարկման հնարավորությունների վրա (Anscombe 1995:189)<sup>3</sup>:

Փաստարկման ուսումնասիրության դաշտն ընդլայնվեց Ժ-Կ. Անսկոմբի եւ Օ. Դյուկրոյի աշխատությունների շնորհիվ: Այս երկու լեզվաբանները վեր հանեցին այն լեզվարտահայտչամիջոցները, որոնց օգնությամբ խոսողը փորձում է փաստարկել իր ասելիքը:

Այսպիսվ ոչ թե լեզուն, այլ խորային գործունեությունը դարձավ հետազոտության օբյեկտը: Դետազոտական այս նոր դիտակետից առաջին պլան մղվեց խոսքի դիմանմիկան սոցիալական համատեքստում, եւ փաստարկումը դիտարկվեց որպես լեզվի հաղորդակցական կարեւորագույն գործառույթներից մեկը, որն իրականանում է հետեւալ կառույցի միջոցով՝ գործածելով **E1** ասույթը (*énoncé*) ընդունելի դարձնել **E2-ը**: Այս մոտեցումը թույլ տվեց Ժ-Կ. Անսկոմբի եւ Օ. Դյուկրոյին հրետորությունն իր ամրող ծավալով բերել լեզվաբանական ուսումնասիրության դաշտ (Anscombe et Ducrot 1988:9)<sup>4</sup>:

Փաստարկման վերլուծությունն, ըստ Էտիքան, ընդգրկուն համակարգ է, որն իր մեջ կարող է ներառել ինչպես առօրյա խոսակցական, այնպես ել գրական ու քաղաքական տեքստեր:

Գիտական գրականության մեջ առանձնացվում է մի քանի սկզբունք, որոնք հիմնարար են համարվում փաստարկման վերլուծության համար: Այդ սկզբունքներն են՝

## 1. Լեզվական

## 2. Դաշտական

<sup>1</sup>Meyer M. Rhetoric, Language and Reason. Pennsylvania State University Press, 1993.

<sup>2</sup>Perelman Ch. et Olbrechts-Tyteca, L'empire rhétorique. Rhétorique et argumentation. Paris, Librairie philosophique J. Vrin, 1970.

<sup>3</sup> Anscombe, J.C. La théorie des topoï, sémantique ou rhétorique ??// Hermès/15, 1995.

<sup>4</sup> Anscombe J.C. et Ducrot O. Deux mais en français??// Lingua 1988/43.

3. Երկխոսական եւ փոխագղեցական
4. Ընդհանրական
5. Ոճաբանական
6. *Տեքստային* (Amossy 2000: 23)<sup>1</sup>:

Այս ենթագլուխում թե՝ ինը եւ թե՝ նոր հռետորության սկզբունքների համադրումը լիովին թույլ է տալիս եզրահանգել, որ փաստարկումը խոսքային ռազմավարության տեսակ է, որում փաստարկողն ինքնիրացվում է որպես լեզվական անհատականություն, եւ որում գործնական նշանակություն են ստանում երա գիտելիքներն ու պատկերացումները, արժեհամակարգը եւ ողջամտությունը, հաղորդակցական հնտություններն ու տրամաբանելու կարողությունը, հուզական վիճակը, փաստարկվող իրավիճակի սոցիալական չափորոշչները:

Աշխատանքի երկրորդ գլուխը («Փաստարկման հայեցակարգը քաղաքական խոսություն») եւս բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին («Քաղաքական խոսությը որպես լեզվաբանական երեւույթ») ենթագլխում սահմանվում են «խոսությա» եւ «քաղաքական խոսությա» հասկացությունները:

Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ «խոսությ» եզրույթը շրջանառվում է լեզվաբանության մեջ: Գիտական գրականության մեջ խնդրո առարկա երեւույթը ներկայացվում է մի շարք հիմնարար առանձնահատկություններով: Այսպես՝ - խոսությը ներառում է այլ կարգի կառույցներ, քան ուղղակին այսադասությունը,  
- խոսությը ուղղորդվում է լսողի կողմից,  
- խոսությը գործողության ձեւ է,  
- խոսությը կարող է միայն իմաստ ունենալ իր համատեքստում,  
- խոսությը գործածվում է կոնկրետ բանախոսի կողմից, ով արտահայտում է, թե ինչ վերաբերմունք ունի այն ամենի նկատմամբ, ինչ ասում է եւ ում ասում է (Charadeau et Maingueneau 2002:187-190)<sup>2</sup>:

Խոսությը բնորոշելու համար ուշագրավ դասակարգում է առաջարկում Պ. Սերին:

1. «խոսք» հասկացության համարժեք, այսինքն՝ ցանկացած կոնկրետ ասույթ /հայտարարություն/,
2. միավոր, որ ավելի մեծ է, քան նախադասությունը, ասույթ ամրողական ինաստով, այսինքն՝ «ստերսուի քերականության» ուսումնասիրման առարկա, որը հետազոտում է առանձին ասույթների հաջորդականությունը,
3. ասության կամ գործարանության տեսության շրջանակում «խոսությ» են կոչում ասույթի ազդեցությունը լսարանի վրա եւ դրա ներմուծումը «խոսքային իրավիճակի» մեջ, որի կազմում են ասության սուբյեկտները, լսարանը, ասության կոնկրետ պահը եւ վայրը,
4. խոսոյի ելույթն ի հակադրություն ասվածի, որը կարող է հանգեցնել հիասքափության՝ առանց ասության սուբյեկտի բացահայտ միջամտության,
5. երրեմն հակադրվում են «լեզուն» եւ «խոսքը» որպես մի կողմից քիչ տարրերակվող վիրտուալ նշանների համակարգ, իսկ մյուս կողմից որպես նակերեսային մակարդակի զանազանում պայմանավորված

<sup>1</sup> Amossy R. L'argumentation dans le discours, Nathan/HER, 2000.

<sup>2</sup> Charadeau P. et Maingueneau D. Dictionnaire d'analyse du discours, Paris, Seuil, 2002.

*լեզվական միավորների տարածույթ կիրառմամբ (տարբերակվում է տարրի ուսումնասիրությունը «լեզվում» եւ դրա ուսումնասիրությունը «խոսքում»),*

6. *սահմանափակ համակարգ, որ տարածվում է անսահմանափակ թվով ասույթների վրա՝ կախված որոշակի սոցիալական կամ գաղափարական դիրքորոշումներից (Sériot 1998:363):*

Պ. Սերիոն հստակ տարանջատում եւ ընդգծում է տարբերությունը «ասույթի» (*énoncé*) եւ «խոսույթի» (*discours*) միջեւ: Սերիոն համարում է, որ «ասույթը» նախադասությունների հաջորդականությունն է, որը գտնվում է իմաստաբանական խնդիրների, հաղորդակցության ժամանակ առաջացող երկու դադարների միջեւ, «խոսույթը» ասույթն է, որը դիտարկվում է խոսքի մեխանիզմների դիտանկյունից, որոնք դեկավարում են այն: Այդպիսով, լեզվի կառուցվածքային առանձնահատկությունների դիտանկյունից տվյալ տեքստը բնորոշվում է որպես ասույթ, տեքստի ստեղծման պայմանների լեզվաբանական հետազոտության դիտանկյունից այն բնորոշվում է որպես խոսույթ (Sériot 1998:385):<sup>2</sup>

«Քաղաքական խոսույթն» ի հայտ է եկել դասական Հունաստանում եւ զարգացել ցիցերոնյան Դոդոնում: Այն ծագել է ի պատասխան «կյանքն ու քաղաքը դեկավարելու պահանջների (...), հանրային խոսքը վերածելով համոզելու գործիքի»՝ հատկապես քաղաքական նպատակներով (Charadeau et Maingueneau 2002:277-278):<sup>3</sup>

Ընդունված է այն տեսակետը, որ քաղաքական խոսույթը ճառի մի տեսակ է, որի միջոցով կոնկրետ բանախոսը հետապնդում է իշխանությունը գրավելու նպատակ՝ ընդդեմ մեկ այլ անհատի, խճի կամ կուսակցության տարվող պայքարում: Դետեւաբար քաղաքական խոսույթի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականները խոսքի այդ տեսակի համար կարենոր են համարում լեզվի գործարանական դրսեւորումները: Այս ենթագլխում ներկայացված են նաև քաղաքական խոսույթի լեզվական առանձնահատկությունները եւ մասնավորապես՝ դրա փաստարկային ներուժը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում (*«Փաստարկման տեսակներն ու լեզվական դրսեւորումները խոսույթում»*) անդրադա է կատարվում փաստարկման տեսակներին եւ մասնավորապես՝ սոցիալ-քաղաքական փաստարկմանը: Ընդունված է փաստարկները բաժանել երկու հիմնական խմբի՝ փորձառական (*expérimental*) եւ տեսական (*théorique*): Որպես փաստարկների դասակարգման հիմք առաջարկվում է նաև հաշվի առնել լսարանի տեսակը, որի վրա տարածվում է փաստարկի ազդեցությունը: Այդ հիմաստով փաստարկման բոլոր ձեւերը բաժանվում են երկու խմբի՝ համընդհանուր (*universel*) եւ համատեքստային (*contextuel*) (Баранов 2000:24):<sup>4</sup>

<sup>1</sup> Sériot P. «La linguistique, le discours sur la langue et l'espace géo-anthropologique russe», in J.-P. Locher (éd.): *Contributions suisses au XIIe congrès international des slavists à Cracovie, août 1998*, Bern: Peter Lang, 1998.

<sup>2</sup> Sériot P. «La linguistique, le discours sur la langue et l'espace géo-anthropologique russe», in J.-P. Locher (éd.): *Contributions suisses au XIIe congrès international des slavists à Cracovie, août 1998*, Bern: Peter Lang, 1998.

<sup>3</sup> Charadeau P. Maingueneau D. *Dictionnaire d'analyse de discours*. Paris: Seuil, 2002.

<sup>4</sup> Баранов А.Н. Лингвистическая теория аргументации (когнитивный подход): Автореф.дис. ... д-ра филол. наук. - М., 2000.

Ըստ գործառույթի եւս փաստարկումը բաժանվում է երկու հիմնական խմբի՝ համագործակցային (*coopératif*) եւ բանավիճային (*polémique*) (Բելովա 2003:204)<sup>1</sup>: Այս ենթագլխում ներկայացվում են նաեւ խոսույթում փաստարկման վերլուծության հիմնական մոտեցումները եւ փաստարկման այն արտահայտչամիջոցները, որոնք կարող են դառնալ ուսումնասիրության առարկա՝ լեզվաբանության դիտանկյունից: Գիտական գրականությունից հայտնի է խոսույթում փաստարկման լեզվաբանական վերլուծության երեք հիմնական ուղղություն՝

1. Կառուցվածքային լեզվաբանություն (հիմնված Ֆ. դը Սույուրի եւ ֆրանսիացի կառուցվածքաբանների աշխատությունների վրա)
2. Լեզվա-գործարանական վերլուծություն (հիմնված Զ. Օստինի, Զ. Սըրլի, Պ. Գրայսի, Զ. Լիչի, Օ. Դյուկրոյի աշխատությունների վրա)
3. Մոցիո-լեզվաբանական վերլուծություն (հիմնված Է. Շոֆֆմանի, Ս. Էրվին-Տրիպի, ՈՒ. Լարովի աշխատությունների վրա)

«Փաստարկում» հասկացությանը մեծ տեղ է վերապահել Օ. Դյուկրոն՝ իր այն աշխատություններում, որը նա կոչել է «համալիր գործարանություն (*pragmatique intégrée*) (Ducrot O., *Les échelles argumentatives*, Paris, Minuit, 1980.), (Ancombe J.C., Ducrot O., *L'argumentation dans la langue*, Bruxelles, Mardaga, 1983.) եւ որով նա հիմք է դրել փաստարկման տեսությանը լեզվի մեջ *la théorie de l'argumentation dans la langue*: Դյուկրոն իր այդ տեսությունը հիմնականում նվիրել է փաստարկող բառերի (*mots argumentatifs*) նկարագրությանը, այն եղանակներին, որոնց լեզվաբանական կիրառումն առավել ազդեցիկ է դարձնում փաստարկումը: Սակայն մինչեւ կոնկրետ փաստարկող բառերին անդրադառնալը, դրանց դերի ու նշանակության կարեւորությունը գնահատելու համար այս ենթագլխում նախ դիտարկվում է, թե առհասարակ ինչ դեր ունի փաստարկումը՝ հաղորդակցության մեջ, որոնք են նմանություններն ու տարբերությունները դատողության ու փաստարկման միջեւ, եւ ինչ հարաբերության մեջ են փաստարկումն ու իրականությունը: Օ. Դյուկրոյի աշխատությունները ցույց են տվել այն շրջադարձային դերը, որ խաղում են փաստարկող բառերը, այնպիսի գործարկիչները (*opérateurs*), ինչպիսիք են՝ *même, ne...que, à peine, peu, un peu, puisque, parce que, donc, etc.* «Կապակցորդ» եղորոյն այսօր շատ նորաձեւ է ժամանակակից լեզվաբանության մեջ, սակայն գոյություն չունի մեկ ընդհանուր սահմանում այդ եղորոյթի համար: Ըստ լեզվաբանների, կապակցորդ եղորոյթը հանգեցրել է տերմինաբանական բանավեճի, սակայն նրանք նիհակարծիք են, որ կապակցորդները ծառայում են խոսույթի տարբեր հատվածները կապակցելուն: Գիտական գրականության մեջ «կապակցորդ» եղորին զուգահեռ շրջանառվում են նաեւ «ցուցիչ» (*marqueur*), «կազմակերպիչ» (*organisateur*) եւ գործարկիչ (*opérateur*) եղորերը, սակայն մենք մեր աշխատանքի համար ընդունելի ենք համարել ու կիրառել հենց «կապակցորդ» եղորը: Ըստ Պ. Շարադոյի եւ Դ. Մենգոնյի, դրանք դասակարգված են երեք մեծ խմբերում, որոնք իրենց հերթին ներառում են իմաստաբանական ենթախմբեր՝

1. Կապակցորդներ, որոնք ապահովում են պարզ կապակցում  
ա/ ժամանակի կապակցորդներ (*après, maintenant, ensuite, etc.*)  
թ/ տարածական կապակցորդներ (*devant, derrière, dessus, etc.*)

<sup>1</sup> Белова А.Д. Лингвистические аспекты аргументации. - К.: КНУ, 2003.

- զ/թվարկման (*et, aussi, également, etc.*) կամ գծային  
ներառնամ կապակցորդներ (*d'abord, en second lieu, enfin, etc.*)
2. Ասույթային աջակցման կապակցորդներ
  - ա/ վերածեակերպման կապակցորդներ (*c'est-à-dire, autrement dit*)  
թ/ զույցի կառուցվածքային կապակցորդներ (*bon, pis, alors, etc.*)
  3. Փաստարկային կապակցորդներ (որոնք ապահովում են փաստարկային կողմնորոշումը)  
ա/ զիջման կապակցորդներ (*mais, pourtant, cependant, etc.*)  
թ/ բացատրման եւ ճշգրտման կապակցորդներ (*car, parce que, puisque, etc.*)  
զ/ վարկածային կապակցորդ "si" (*si - alors*)  
դ/ փաստարկի պարզ կապակցորդներ (*même, d'ailleurs, de plus, etc.*) (Charaudeau et Maingueneau 2002:126-128)<sup>1</sup>.

Լեզվում փաստարկման տեսության վարկածն այն է, որ փաստարկող բառերը սահմանազատում են փաստարկները տեքստային տարածքում լսողին ստիպելով հանգել կոնկրետ եղանակացությունների: Այս վարկածը բավականին ուշագրավ օրինակներով հիմնավորում են Ժ.Մոշչերը եւ Ա. Ռեբուլը (Moeschler J. et Reboul A. Compréhension, pragmatique et argumentation): Հետազոտողների ներքոնշյալ (1a) օրինակից հետեւում է, որ Jean-ը լավագույն թեկնածուն չէ օգնականի պաշտոնի համար, ինչը չի երեւում (1b) օրինակում:

(1)      a. Jean est intelligent, mais désordonné.

      b. Jean est intelligent et désordonné.

Ըստ լեզվագործաբանական մոտեցման, փաստարկող բառերը սահմանափակում են ենթատեքստային ազդեցությունը, ավելին՝ դրանք սահմանափակում են ենթատեքստի ազդեցության հնարավորությունները՝ ավելացնելով կոնկրետ տեղեկություն, որը հեշտացնում է ասույթի ընկալումը:

Լեզվագործաբանական վերլուծությունը, սակայն, չի սահմանափակվում միայն կապակցորդների, ասույթների փաստարկային ուղղվածության ու դրանց կապակցման հետազոտությամբ: Այն առաջարկում է բազմաթիվ գործիքներ, որոնք ծառայում են խոսույթի միկրովերլուծությանը:

Երրորդ գլուխք՝ («Փաստարկման լեզվական առանձնահատկությունները քաղաքական խոսույթում») նույնպես ունի երկու ենթագլուխք:

Առաջին ենթագլուխք («Փաստարկման լեզվարտահայտչամիջոցները քաղաքական ելույթներում») ուսումնասիրության առարկան ֆրանսիայի 5-րդ հանրապետության նախագահների ելույթներում առկա փաստարկման լեզվարտահայտչամիջոցներն են:

Վերլուծության արդյունքում հետազոտական լեզվանյութը վերաբաշխել ենք հետեւյալ խճերում՝

1. Ներակա փաստարկում
  2. Եզրույթների վերասահմանում
  3. Հոնորական հարց եւ միջանկյալ նախադասություն
  4. Փաստարկման կապակցորդներ
  5. Զուգահեռ փաստարկում
- ԽՈՒՄ 1. ՆԵՐԱԿԱ ՓԱՍՏԱՐԿՈՒՄ**

Destin de la Communauté ! Il s'agit de faire vivre cette institution magnifique qui unit, en vertu d'un contrat passé en toute indépendance, d'une part la métropole française ainsi que les départements et les territoires d'outre-mer, d'autre part, les Républiques nées

<sup>1</sup>Charaudeau P. et Maingueneau D. Dictionnaire d'analyse du discours, Paris, Seuil, 2002.

dans les contrées d'Afrique, où, sous les plis du drapeau tricolore, ont fleuri la Liberté, l'Egalité et la Fraternité. Dans l'ensemble ainsi formé, une place de choix est destinée à l'Algérie de demain, pacifiée et transformée, développant elle-même sa personnalité et étroitement associée à la France. Au milieu d'un monde dangereux, quel atout pour la paix des hommes, quelle carrière ouverte au progrès, quel honneur pour les Français et pour leurs frères africains. (**Discours d'investiture du général de Gaulle, Président de la République et de la Communauté, Palais de l'Elysée - 8 janvier 1959**)

Ելույթի այս հատվածում դը Գոլը խոսում է համայնքի ճակատագրի մասին եւ ընդգծում, թե ինչպիսի հնարավորություններ է այն ընձեռում մասնավոր տեղ վերապահելով Ալժիրի ապագային: Դը Գոլի երդմնակալության ելույթի այս հատվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախագահի ասույթը պարունակում է առնվազն երկու կանխենթադրույթ եւ երեք ենթադրյալ: Դեղինական ընդգծում է, որ ներկայում Ալժիրն ունի դժվարություններ, որոնք պետք է հաղթահարել (a), փաստարկում է, որ երկիրն ունի ընտրության հնարավորություն (b) եւ եզրակացնում, որ դա կարող է հանգեցնել Ալժիրի ինքնուրույն զարգացմանը (c): Դը Գոլը նաև փաստարկում է, որ այդ հնարավորությունը Ալժիրի համար ստեղծել է Ֆրանսիան (d), ու որ Ալժիրի անկախ զարգացումը չի վտանգում Ֆրանսիայի հետ փոխհարաբերությունները (e):

- a. **Կանխենթադրույթ:** Il existe l'Algérie d'aujourd'hui qui a besoin de se pacifier et de se transformer.
- b. **Կանխենթադրույթ:** L'Algérie a du choix.
- c. **Ենթադրյալ:** Il y aura l'Algérie de demain qui pourra se développer elle-même.
- d. **Ենթադրյալ:** Cette possibilité est créée par la France d'après son principe de «la Liberté, l'Egalité et la Fraternité».
- e. **Ենթադրյալ:** Après ce développement aussi l'Algérie sera étroitement associée à la France.

## ԽՈՒՄ 2. ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱՍԱՐԱՎԱԾՈՒՄ

Ներակա փաստարկներից ոչ պակաս ուշագրավ ուսումնասիրության նյութ է «Եզրույթների վերասահմանման» երեւույթը, որով քաղաքական գործիչներին հաջողվում է ավելի մեծ ազդեցություն գործել իրենց լսարանի հոգե-հոլզական աշխարհի վրա՝ փոխելով վերջինիս պատկերացումներն ու մոտեցումներն այս կամ այն երեւույթի նկատմամբ:

De ce jour, date une ère nouvelle de la politique française. Ceci n'est pas seulement dû, M. le président du Conseil Constitutionnel, à la proclamation du résultat que vous venez de rappeler et dont, par respect pour la France et pour sa longue histoire, je mesure l'honneur. Ceci n'est pas seulement dû aux 13 396 203 femmes et hommes qui m'ont fait la confiance de me désigner pour devenir le vingtième Président de la République française. Ceci est dû en réalité à la totalité des suffrages du 19 mai 1974. Ces suffrages égaux selon la règle démocratique qu'il s'agisse de ceux des femmes et des hommes, des jeunes et des moins jeunes, des travailleurs et des inactifs, et qui se sont prononcés chacun à leur manière et selon leur préférence en témoignant leur volonté de changement. (**Discours d'investiture de Valéry Giscard d'Estaing**).

Նախագահ Վալերի Ժիվար դէստենը տեքստի այս հատվածում պարզ ձեւակերպմանը նշում է, որ ընտրության արդյունքը որոշվում է քվերակության միջոցով, սակայն քվեարկության կերեւությունը փաստարկելու համար *ceci n'est pas... ceci est...* վերածւակերպման կապակցողների օգնությամբ վերասահմանում է «քվերակություն» եզրույթը ընդգծելով, որ ընտրությունները

ոչ միայն սովորական քաղաքական գործընթաց են, այլև ընտրողներ, որոնք մասնակցում են դրանց: Ընտրության արդյունքի բացարձակ լինելու հանգանակն ընդգծելու համար նախագահը շարունակում է նույն վերաձեւակերպման սկզբունքով եւ հստակեցնում, որ քվեարկողները ներակայացնում են հասարակության բոլոր սոցիալական խավերը: Եզրույթները վերասահմանելու փաստարկման լեզվարտհայտչամիջոցին նախագահը դիմում է, ըստ երթյան, իր լսարանին ներշնչելու համար այն համոզմունքը, որ հենց իրենց է վերապահված իրավունքը որոշելու, թե ով պետք է գրադարձնի նախագահի պաշտոնն ու իրականացնի ժողովրդի կողմից պահանջվող փոփոխությունները:

Եզրույթների վերասահմանման նմանատիպ մոտցում առկա է նաև մյուս նախագահների ելույթներում, որոնց օրինակները եւս ներկայացված են աշխատանքի այս ենթագլխում:

### **ԽՈՒՄ 3. ՉՈԵՏՈՐԱԿԱՆ ԴԱՐՑ ԵՎ ՄԻԶԱՆԿՅԱԼ ՆԱԽԱՌԱՍՈՒԹՅՈՒՆ**

Ֆրանսիայի 5-րդ հանրապետության նախագահների ելույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախագահները փաստարկելու նպատակով հաճախ նաև հուետորական հարց են կիրառում.

Peut-on accepter, au siècle de l'Internet, que la France conserve un taux d'illettrisme de près de 10 % ? Peut-on accepter que près du quart des enfants entrant en sixième ne maîtrise pas la lecture, l'écriture et le calcul ? Peut-on accepter que chaque année 60 000 jeunes quittent l'école à 16 ans sans aucune qualification reconnue ? Peut-on accepter que l'échec universitaire frappe chaque année près de 20 % des étudiants inscrits en DEUG ? (*Discours de M. Jacques CHIRAC à Saint-Cyr-sur-Loire (campagne électorale pour l'élection présidentielle) Saint-Cyr-sur-Loire, Indre-et-Loire, le mercredi 27 février 2002.*)

Նախագահ Ժակ Շիրակն այս ելույթում խոսում է ֆրանսիացիների կրթական հիմնախնդիրների մասին: Նախագահը լսարանին է ցանկանում փոխանցել իր մտահոգությունները: Ելույթի ամբողջ հատվածը բաղկացած է հուետորական հարցերից, որոնցով, սակայն, նախագահը ոչ թե հարց է ուղղում լսարանին, այլ փորձում համոզել, որ չի կարելի ինտերնետի դարաշրջանում ունենալ մոտ 10% անգրագիտություն, չի կարելի հանդուրժել, որ 6-րդ դասարանի երեխաների գրեթե մեկ քառորդ չփոխի կարդալ, գրել եւ հաշվել, չի կարելի հանդուրժել, որ անեն տարի 60 հազար երիտասարդ դպրոցն ավարտում է առանց որևէ որպակվորման, չի կարելի հանդուրժել, որ յուրաքանչյուր տարի ընդհանուր համալսարանական կրթություն ստացող ուսանողների մոտ 20 % -ը ձախողվում է: Իր ասույթը փաստարկելու եւ իր համոզմունքները լսարանի համոզմությունների մասը դարձնելու համար է հենց նախագահ Շիրակը գործածում հուետորական հարցը:

Ֆանսիացի քաղաքական գործիչների ելույթներին հուետորական հարցից բացի, որպես փաստարկման լեզվարտհայտչամիջոց, բնորոշ են նաև միջանկյալ նախադասությունները.

Mais je crois qu'au point de vue de la sécurité, nous avons atteint un degré tel, à l'heure actuelle, que le risque peut être considéré comme tout à fait minime.

D'abord une remarque qu'on fait toujours avec la plus extrême prudence, c'est que voilà une forme d'énergie nouvelle qui n'a encore entraîné la mort de personne.

On ne peut pas en dire autant, hélas, des mines de charbon, on ne peut même pas en dire autant de la construction de grands barrages qui ont entraîné jadis des accidents provoquant la mort de dizaines et parfois de centaines de personnes. Simplement, constatons que jusqu'à présent, et je dirai grâce au ciel, il n'y a eu la mort de personne. Ensuite, je crois que

l'opinion, et je la comprends, ne sait pas très bien ce qui se passe dans une centrale. (**La France et le nucleaire: interview de M. Valery Giscard d'Estaing à Europe 1, diffusée le vendredi 18 Janvier 1980**)

Նախագահ Վալերի Ժիվար դ'Էստենն այս Ելույթում խոսում է միջուկային էներգիայի՝ մասնավորապես անվտանգության խնդիրների մասին: Ելույթի այս հատվածում նախագահը ներկայացնում է նի քանի թեզ եւ դրանց ճշմարտացիությունը փաստարկելու համար դիմում է միջանկյալ նախադասությունների օգնությանը: Նախ նախագահը համոզմունք է հայտնում, որ իրենք հասել են անվտանգության կոնկրետ աստիճանի, ինչը նվազեցնում է ռիսկերը (*[...] au point de vue de la sécurité, nous avons atteint un degré tel, à l'heure actuelle, que le risque peut être considéré comme tout à fait minime.*): Ելույթի մյուս հատվածում նախագահն ընդգծում է, որ դեռևս մահվան որեւէ դեպք չի արձանագրվել, սակայն անվտանգությունը կարեւորելուց բացի, միեւնույն ժամանակ փաստարկելով, որ ինքը չի թերագնահատում նախախնամության դերն այդ հարցում (*[...] constatons que jusqu'à présent, et je dirai grâce au ciel, il n'y a eu la mort de personne.*): Եվ ի վերջո նախագահը միջանկյալ նախադասությամբ փաստարկում է, որ ինքը հասկանում է անհանգստացողներին (*[...] je crois que l'opinion, et je la comprends, ne sait pas très bien ce qui se passe dans une centrale.*) միեւնույն ժամանակ վստահեցնելով, որ ինքն այդքան էլ չի կիսում անհանգստությունը, քանի որ անհնագստացողներն իրականում չեն պատկերացնում ինչ է կատարվում ներսում:

#### ԽՈՒՄ 4. ՓԱՍՏԱՐԿԱՍԻ ԿԱՊԱԿՑՈՐԴՆԵՐ

Ատենախոսության այս հատվածում համակողմանի վերլուծության ենք ենթարկել այն կապակցորդները, որոնք բնորոշ են քաղաքական խոսույթին եւ առավել շատ են հանդիպում Ֆրանսիայի 5-րդ հանրապետության նախագահների ելույթներում:

Մեր հետազոտությունը թույլ է տալիս պմտել, որ որպես փաստարկման կապակցորդ քաղաքական խոսույթին խիստ բնորոշ է *mais* շարկապի կիրառությունը: Ստորև ներկայացված է հատված գեներալ դը Գոլի ելույթից.

**[E1]** Au cours du dernier demi siècle, il a subi les blessures et les déchirements les plus graves de son histoire. **[E2]** Mais, voici qu'une occasion soudaine s'est offerte à lui de sortir du doute, des divisions, des humiliations. (**Discours d'investiture du général de Gaulle**)

Երդմանակալության տեքստի այս հատվածում դը Գոլն անդրադարձ է կատարում այն դժվարություններին, որոնց միջով անցել է Ֆրանսիայի հանրապետությունը՝ ընդգծելով, որ դրանք եղել են վերջին 50 տարվա ամենածանր փորձությունները, սակայն միեւնույն ժամանակ հաջորդ ասույթում, որը տեքստի մեջ ներմուծված է *mais* կապակցորդի օգնությամբ, նախագահը փաստարկում է, որ Ֆրանսիան այժմ ունի հնարավորություն հաղթահարելու դրանք ու դրւս գալու ստեղծված վիճակից: Այստեղ ուշագրավ է, որ *mais* կապակցորդը դը Գոլը գործածում է երկու լիովին անկախ նախադասություն իրավ կապակցելու նպատակով, որոնցից մեկը փաստարկ է մյուսի համար: Այսինքն դե Գոլը հենց *mais*-ի օգնությամբ է փաստարկում, որ չնայած **E1**-ի գոյությանը **E2**-ը լիովին հնարավոր է: Այս ասույթի ուսումնասիրությունից հետեւում է, որ *mais*-ն ոչ միայն կապակցում է **E1** եւ **E2**-ը՝ որպես շաղկապ, այլ ուժեղացնում է **E2**-ի համոզելու ու լսարանի վրա ազդեցություն գործելու ներուժը՝ հանդես գալով որպես փաստարկման կապակցորդ:

Ֆրանսիայի նախագահների քաղաքական ելույթների տեքստերում, իսկապես, ակնհայտ է, որ գիշման կապակցորդների շարքում քաղաքական

գործիչներն առաջնահերթությունը վերապահում են *mais*-ին, սակայն, ոչ շատ հաճախ, հանդիպում ենք նաեւ *pourtant* կապակցորդի գործածնաբը: Չնայած ակնհայտ է, որ եթե *mais*-ն առավելապես կիրառվում է երկու ասույթներ միմյանց կապելու եւ մեկի միջոցով մյուսն ընդունելի դարձնելու համար, ապա *pourtant*-ն ավելի շատ գործածավում է կոնկրետ ասույթի փաստարկային ներուժն ամրապնդելու համար:

[...] Ou, au contraire, sécheresses interminables dans des régions pourtant non désertiques... [...] (**Discours de M. Jacques CHIRAC à Avranches (campagne électorale pour l'élection présidentielle) Avranches, Manche, le lundi 18 mars 2002**)

Ժակ Շիրակն իր այս ելույթում խոսում է կլիմայի անսովոր դրսեւորումների, 1999 թվականի փոթորիկների ու զանգվածային ջրհեղեղների մասին: Սակայն կլիմայական փոփոխությունների բացասական հետեւանքների վերաբերյալ իր մտահոգություններն առավել փաստարկված դարձնելու համար Շիրակը խոսում է նաեւ երաշտների մասին ու հենց *pourtant* կապակցորդի օգնությամբ փաստարկում, որ այդ երաշտներն առավել անհանգստացնող են, քանի որ գրանցվել են ոչ անապատային շրջաններում: Ակնհայտ է, որ Շիրակի ելույթի այս հատվածի փաստարկային ներուժն ուղղակիորեն ապահված է *pourtant* կապակցորդի կիրառությամբ՝ հակառակ կեաքրում նախագահի ելույթը կլիմեր ընդամենը երաշտի նասին, որն այնքան էլ տարօրինակ երեւույթ չէ բնության մեջ:

Ֆրանսիայի 5-րդ հանրապետության նախագահների ելույթների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քաղաքական խոսույթին բնորոշ է նաեւ բացատրման եւ ծզգրտման *parce que* կապակցորդի կիրառությունը.

[E1] Exigence de rassembler les Français [E2] parce que la France n'est forte que lorsqu'elle est unie et qu'aujourd'hui elle a besoin d'être forte pour relever les défis auxquels elle est confrontée. (**Discours d'investiture de Nicolas Sarkozy**).

Իր այս ասույթում նախագահ Սարկոզին խոսում է Ֆրանսիայի ժողովրդի համախմբման մասին: Դամախմբման կարեւորությունը փաստարկելու համար նախագահը կիրառում է բացահայտման եւ ծզգրտման *parce que* կապակցորդը: Այսինքն՝ այստեղ գործում է փաստարկման ամենապարզ բանաձեւը՝ [E2] ասույթը կիրառվում է [E1] ասույթն ընդունելի դարձնելու համար: Այդ բանաձեւի կենսունակությունն էլ ապիվում է հենց *parce que* փաստարկման լեզվարտահայտչամիջոցի օգնությամբ:

Բացատրման եւ ծզգրտման արտահայտչամիջոցների շարքում քաղաքական ելույթներին բնորոշ է նաեւ *car* շաղկապի կիրառությունը:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքական խոսույթին բնորոշ է նաեւ փաստարկի պարզ կապակցորդների կիրառությունը: Դրանց շարքում բավական հաճախ կարելի է հանդիպել *même* կապակցորդի գործածնաբը: Դիտարկենք մեկ օրինակ.

L'intérêt national pour la Nation, l'intérêt commun dans la Communauté, voilà donc ce que, maintenant comme hier, j'ai le devoir de représenter et de faire valoir en tout cas, même d'imposer s'il arrivait que le salut public l'exigeât. (**Discours d'investiture du général de Gaulle**).

Իր այս ասույթում դը Գոլն ընդգծում է, որ ամենակարեւորը համազգային շահն է եւ փաստարկելու համար, թե այդ շահն այնքան կարեւոր է, որ դրա իրացման համար նախագահը կարող է նաեւ պարտադրանք կիրառել գործածում է *même* փաստարկի պարզ կապակցորդը: Առանց այդ կապակցորդի դը Գոլի ասույթը կարող էր ընկալվել բոլորովին այլ կերպ. այն է՞ ոչ թե նախագահը ցանկանում է պաշտպանել ազգային շահը, այլ նախագահը դրսեւորում է մենիշխանական նկրտումներ: Քաղաքական ելույթներում քաղաքական գործիչներն իրենց

մտքերն առավել համոզիչ դարձնելու համար դիմում են նաեւ փաստարկի այնպիսի պարզ կապակցորդների կիրառմանը, ինչպիսիք են *de plus, moins, d'ailleurs* լեզվարտահայտչամիջոցները:

Ֆրանսիայի 5-րդ հանրապետության նախագահների ելույթներին բնորոշ են նաեւ ժամանակի կապակցորդները, որոնք նախագահները գործածում են որպես փաստարկան լեզվարտահայտչամիջոց:

A présent, la réalisation des armements nucléaires vient à son tour apporter un bouleversement complet dans ce qui est la sécurité et, par conséquent, dans ce qui est la politique des États, et cela dès le temps de paix. A plus forte raison serait-ce le cas en temps de guerre. (*Allocution de Charles de Gaulle à l'Ecole Militaire, 15 février 1963*)

1963 թվականին Ռազմական դպրոցում նախագահ դը Գոլը ելույթ է ունենում միջուկային գենքի եւ դրանով սպառագինվելու միտումների մասին: Նախագահը ելույթում խոսակ խոսում է միջուկային գենքի բոլոր հնարավոր բացասական հետեւաճների մասին: Նախագահի ելույթի այս հատվածում ուշագրավն այն է, որ հենց սկզբում դը Գոլը դիմում է *à présent* ժամանակի կապակցորդի օգնության՝ ոչ միայն թեմայի արդիականությունն ընգծելու, այլ՝ նախեւառաջ փաստարկելու համար, թե ինչու է ինքը որոշել հենց այսօր խոսել միջուկային սպառագինության վտանգների մասին դրանով իսկ համոզնունք ներշնչելով լսարանին, որ սա խնդիր է, ինչին պետք է անդրադառնալ առանց ժամանակ կորցնելու:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս նաեւ, որ Ֆրանսիացի քաղաքական գործիքներին ոչ այնքան հաճախ, որքան ժամանակի կապակցորդները, բայցեւայնպես բնորոշ են նաեւ տարածական կապակցորդները.

Monsieur le Maire, Monsieur le Président du Conseil Régional, Mes chers amis, Dans cette magnifique région d'Avranches avec, sous les yeux, ce joyau qu'est le Mont Saint-Michel, comment ne pas éprouver fortement un sentiment de responsabilité? naturel.

(*Discours de M. Jacques CHIRAC à Avranches (campagne électorale pour l'élection présidentielle) Avranches, Manche, le lundi 18 mars 2002*)

Նախագահ ժակ Շիրակն այս նախընտրական ելույթում խոսում է Ֆրանսիայի մշակութային ժառանգության, այն արժեվորելու ու պահպանելու մասին: Նախագահը ելույթի այս հատվածում, ըստ եռթյան, փորձում է լսարանին ներշնչել այն համոզնությունը, որ ինքը գիտակցում է իր պատասխանատվությունն այդ ժառագության նկատմամբ, եւ այդ նապատակին համեմու համար էլ դիմում է *dans (Dans cette magnifique région d'Avranches [...] ) եւ sous (.../sous les yeux, ce joyau qu'est le Mont Saint-Michel [...])* տարածական կապակցորդների գործածնամբ ապահովելով իր ասույթի փաստարկային ներուժը:

Ֆրանսիայի 5-րդ հանրապետության նախագահների ելույթներում ակնհայտ է նաեւ, որ քաղաքական գործիքները խոսի փաստարկային ներուժը մեծացնելու համար դիմում են նաեւ թվարկման կամ գծային ներառնան կապակցորդների կիրառմանը.

[...] L'essentiel, pour jouer un rôle international, c'est d'exister par soi-même, en soi-même, chez soi. Il n'y a pas de réalité internationale qui ne soit d'abord une réalité nationale. Il faut qu'un pays qui veut jouer son rôle dans le monde prenne les voies qui le lui permettent. Or, cela revient, d'abord, à se constituer un État. (*Allocution de Charles de Gaulle prononcée à l'Assemblée Fédérale du Mali, 13 décembre 1959*)

Նախագահ Շառլ դը Գոլը Մալիի Դաշնային Ժողովում ելույթի ժամանակ խոսում է Մալիի քաղաքական ուղենիշի մասին մասնավորապես անդրադառնալով այդ պետության՝ միջազգային ասպարեզում հնարավոր դերակատարության մասին:

Որպես ավելի հին քաղաքական ավանդույթներ ունեցող երկրի դեկավար, դը Գոլը խորհուրդ է տալիս, թէ ինչ է պետք ամել միջազգային կշիռ ձեռք բերելու համար՝ մատնանշելով, որ առաջնահերթորեն պետք է լուծել ներքին խնդիրները, քանի որ միջազգային իրականությունն ուղղակիորեն բխում է ազգային իրականությունից: Իր այս միտքը փաստարկելու համար էլ դը Գոլը գործածում է *d'abord* գօնային ներառման կապակցորդը՝ լսարանին համոզելու համար, որ ամեն բան սկսվում է պետությունից: հետեւաքար՝ նախեւառաջ անհրաժեշտ է կառուցել պետություն:

Փաստարկման լեզվարտահայտչամիջոցների շարքում ֆրանսիայի 5-րդ հանրապետության նախագահների ելույթներին բնորոշ են նաեւ գրուցի կառուցվածքային կապակցորդները.

La France a besoin et chacun le sait, d'abord d'un système éducatif perfectionné assurant la formation intellectuelle et professionnelle complète de la jeunesse française et à cet égard que faut - il faire? Alors, il faut d'abordachever les réformes qui sont actuellement à l'étude [...] Il faut donc traiter le problème de l'éducation dans son ensemble et faire en sorte que nous puissions avoir un des systèmes éducatifs les plus avancés du monde. (**Cinq questions des Français à M. Valery Giscard d'Estaing sur l'inflation, l'indemnisation du chômage, les personnes agées, l'éducation, une émission de JT, avec la collaboration de la SOFRES, le 6 Janvier 1975**)

Նախագահ Վալերի Ժիվկար ո՛ եստեմը ելույթում խոսում է կրթական համակարգի անհրաժեշտ բարեփոխումների մասին՝ նշելով, որ այսօր դա երիտասարդության առջեւ ծառացած առաջնահերթ մարտահրավերներից մեկն է: Լսարանին համոզելու համար, որ բարեփոխումներն անհրաժեշտ են եւ անխուսափելի, նախագահն իր ասույթը կառուցում է հրետորական հարցի միջոցով (*...que faut - il faire?*): Եւ ապա փաստարկում գործածելով *alors* գրուցի կառուցվածքային կապակցորդը (*Alors, il faut d'abordachever les réformes qui sont actuellement à l'étude!...)*): Ժամանակի պահանջների մասին խոսելով՝ նախագահը կարեւորում է կրթական համակարգի խնդիրների համալիր դիտարկումը, եւ այդ կարեւորությունը փաստարկելու նպատակով էլ կիրառում *donc* գրուցի կառուցվածքային կապակցորդը (*Il faut donc traiter le problème de l'éducation dans son ensemble!...)*:

Նախագահների ելույթներում հանդիպում ենք նաեւ փաստարկման մեկ այլ լեզվարտահայտչամիջոցի, որին գիտական գրականությունը տվել է վերածեակերպման կապակցորդ անվանումը:

Pour la France, à qui sa situation géographique, sa raison d'être historique et sa nature politique interdisent la neutralité, pour la France qui, d'autre part, n'entend pas remettre son destin en propre à un étranger, si amical qu'il puisse être, il est absolument nécessaire qu'elle ait de quoi agir dans la guerre, autrement dit un armement atomique. (**Allocation de Charles de Gaulle à l'Ecole Militaire, 15 février 1963**)

Ուզմական դպրոցում ունեցած այս ելույթում նախագահ Շառլ դը Գոլը խոսում է սպառազինության ժամանակակից խնդիրների մասին: Նախագահը համազնութ է հայտնում, որ ֆրանսիան, հաշվի առնելով աշխարհագրական դիրքը, պատմական իիմքերը եւ քաղաքական բնույթը, չի կարող չեզոք մնալ այս հարցում եւ պետք է անպայման ունենա միջոցներ պատերազմնելու համար, իսկ միջոցներից ամենակարեւորը միջուկային գենքն է: Յենց այդ միտքը փաստարկելու համար էլ նախագահ Շառլ դը Գոլը գործածում է *autrement dit* վերածեակերպման կապակցորդը (*...il est absolument nécessaire qu'elle ait de quoi agir dans la guerre, autrement dit un armement atomique.*)

Ֆրանսիայի 5-րդ հանրապետության նախագահների ելույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆրանսիական քաղաքական խոսույթին

բնորոշ է նաև *si* Վարկածային կապակցորդի գործածումը որպես փաստարկման լեզվարտահայտչամիջոց:

Il y a également les prévisions alarmistes des experts. Elles nous annoncent pour 2020, si nous ne faisons rien, la désertification de la moitié des continents et des difficultés d'accès à l'eau potable pour deux habitants de la planète sur trois. (**Discours de M. Jacques CHIRAC à Avranches (campagne électorale pour l'élection présidentielle) Avranches, Manche, le lundi 18 mars 2002**)

Նախագահ Ժակ Շիրակը ելույթի այս հատվածում խոսում է փորձագետների այն ահազանգի մասին, որն առնչվում է բնապահպանական խնդիրներին ու մասնավորապես՝ արդեն 2020 թվականին խմելու ջրի պաշարների նվազմանը: Նախագահը ցանկանում է, որ լսարանը գիտակցի եւ գնահատի Վտանգի իրական չափն ու լրջությունը: Միենանյա ժամանակ Շիրակը փորձում է լսարանին ներշնչել այն համոզմունքը, որ մարդիկ պարտավոր են ինչ որ բան անել այդ Վտանգներին դիմակայելու համար եւ ելույթի վերջում շեշտում, թե քաջ գիտակցում է, որ ինքը եւս անելիք ունի այդ բնագվառում եւ դրան է միտված ֆրանսիացիներին առաջարկվող իր քաղաքական ծրագիրը: Փաստարկելու համար իր այն միտքը, որ մարդիկ պատասխանատու են անապատացման համար եւ կարող են փոխել իրադրությունը, նախագահ Ժակ Շիրակը դիմում է *si* Վարկածային կապակցորդի գործածնանը (*Elles nous annoncent pour 2020, si nous ne faisons rien, la désertification de la moitié des continents et des difficultés d'accès à l'eau potable pour deux habitants de la planète sur trois*):

#### **ԽՈՒՄ 5. ԶՈՒԳԱՐԵՌ ՓԱՍՏԱՐԿՈՒՄ**

«Բառակրինությունը» (*anaphore*) ոճական դարձույթ է, որն առավել բնորոշ է չափած ստեղծագործություններին եւ ապահովում է դրանց ոիբրն ու արտահայտչականությունը: Ֆրանսիայի 5-րդ հանրապետության նախագահների ելույթների մեր ուսումնասիրությունը, սակայն, հանգեցրեց մի ուշագրավ դիտարկման, որ բառակրինությունը ոչ միայն կարող է բնորոշ լինել խոսույթի այդ տեսակին, այլ ավելին՝ այն կարող է հանդես գալ որպես փաստարկման լեզվարտահայտչամիջոց.

Je pense avec émotion à cette attente, à cette espérance, à ce besoin de croire à un avenir meilleur qui se sont exprimés si fortement durant la campagne qui vient de s'achever. Je pense avec gravité au mandat que le peuple français m'a confié et à cette exigence si forte qu'il porte en lui et que je n'ai pas le droit de décevoir.

Exigence de rassembler les Français parce que la France n'est forte que lorsqu'elle est unie et qu'aujourd'hui elle a besoin d'être forte pour relever les défis auxquels elle est confrontée.

Exigence de respecter la parole donnée et de tenir les engagements parce que jamais la confiance n'a été aussi ébranlée, aussi fragile.

Exigence morale parce que jamais la crise des valeurs n'a été aussi profonde, parce que jamais le besoin de retrouver des repères n'a été aussi fort.

#### **[...] (Discours d'investiture de Nicolas Sarkozy)**

Մեր կարծիքով վերը ներկայացված տեքստի պարբերությունները միմյանց նման են ոչ միայն կառուցվածքով, այլև ներքին բովանադակությամբ ու փաստարկման արանձնահատկությամբ: Ակնհայտ է, որ այստեղ նախագահ Սարկոզին դիմում է բառակրինության օգնությանն ասելիքի կարեւորությունն ընդգծելու համար եւ այդ նապատակով գործածում է պահանջ (*exigence*) բառը: Լսարանին համոզելու համար Սարկոզին բոլոր պարբերություններում փաստարկի արտահայտման համար գործածում է բացահայտման եւ ճշգրտման

*parce que* կապակցորդը: Այս տեքստի ուսումնասիրությունը թույլ է տալիս ընդգծել երեք ուշագրավ առանձնահատկություն:

ա/ *բարակրկնություն (exigence)*

բ/ *փաստարկի միեւնույն կապակցորդի կիրառություն (parce que)*

գ/ *տեքստի զուգահեռ կառուցվածք:*

Այս երեք առանձնահատկությունները հանդիպում են այլ ելույթներում եւս ու թույլ են տալիս առաջ քաշել փաստարկման լեզվարտահայտչամիջոցի մի նոր վարկած, որը բնութագրելու համար մենք առաջարկում ենք գործածության մեջ դնել «զուգահեռ փաստարկում» (*argumentation parallèle*) եզրույթը:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Փաստարկումը տեքստի կառուցվածքի մակարդակում») ըննության մեջ առել փաստարկման երեւութը տեքստի կառուցվածքի մակարդակում:

Ժամանակակից լեզվաբանությունն այսօր մեծ տեղ է վերապահում խոսույթի տեքստային վերլուծությանը, որն այլ կերպ կոչում են նաև «տեքստի լեզվաբանություն» (*linguistique textuelle* /J.-M. Adam/):

Դիմք ընդունելով «տեքստի լեզվաբանության» ժամանակակից մոտեցումները, աշխատանքի այս հատվածում որպես հետազոտության նյութը ընտրել ենք Ֆրանսիայի 5-րդ համրապետության նախագահների այն ելույթները, որոնցում, մեր կարծիքով, փաստարկումը ոչ միայն անհրաժեշտություն է, այլև՝ առաջնային նպատակ: Սյուս սկզբունքը, որով ընտրել ենք մեր հետազոտության նյութը, տեքստերի համեմատաբար ոչ մեծ ծավալն է, որպեսզի ուսումնասիրվող խնդիրն առավել ակնհայտորեն բացահայտվի:

[1] A vous tous, Roumaines et Roumains, je dis ce soir combien je suis honoré, heureux, touché, de vous avoir rendu visite.

[2] J'en suis honoré, parce qu'ainsi j'ai pu vous apporter le salut de mon pays. Il y a bien longtemps que nos deux peuples sont amis. Mais c'est surtout au cours des grandes épreuves de ce siècle qu'on a apprécié, en France, toute la valeur de la Roumanie. [...] Nous savons que la Roumanie, bien que réduite dans sa superficie, en est sortie plus roumaine que jamais.

[3] Je suis heureux d'être venu. Car, à côté des belles et nobles choses que le passé vous a léguées, j'ai vu quels progrès modernes vous êtes en train d'accomplir, dans l'industrie, l'agriculture, l'enseignement, la technique. [...] Mais aussi j'ai vu votre peuple, fier, actif et bien vivant. [...] Aucun pays du monde ne pourrait s'en réjouir plus que la France qui, depuis toujours et surtout aujourd'hui, aime et estime la Roumanie ; la France qui souhaite ardemment la voir forte et prospère, la France qui compte la trouver à ses côtés afin d'aider notre Europe à respirer enfin librement, grâce à l'indépendance de chaque nation, à la fin des blocs opposés, à la franche coopération établie d'un bout à l'autre pour la paix et pour le progrès.

[4] Je suis touché jusqu'au plus profond de mon âme par votre accueil, par la façon dont la France, en ma personne, a été reçue chez vous [...]

(*L'allocution radiodiffusée et télévisée du Général de Gaulle prononcée à Bucarest*) Ինչպես տեսնում ենք, ելույթի տեքստի հենց առաջին պարբերությունը [1] դեղութ սկսում է ոչ թե նկարագրական կամ պատմողական նախաբանով, այլ փաստարկով՝ լսարանին ներշնչելու այն համոզմունքը, որ իր համար պատիվ է ռումինացիներին այցելելը ( [...] je dis ce soir combien je suis honoré, heureux, touché, de vous avoir rendu visite). Նախագահը ելույթի տեքստի երկրորդ պարբերությունը [2], ըստ եղբայրական ամրապնդում է առաջինում ներկայացրած միտքը՝ գործածելով *parce que* բացատրման եւ ճշգրտման կապակցորդը՝ փաստարկելով, որ իր համար պատիվ է ոչ միայն ռումինացիներին այցելելը,

այլեւ իր պետության ողջույնները փոխանցելը (J'en suis honoré, parce qu'ainsi j'ai pu vous apporter le salut de mon pays). Այս պարբերությունում դը Գոլը խոսում է նաեւ ֆրանսիացիների եւ ռումինացիների երկարատեւ բարեկամության մասին, սակայն համոզնունք է հայտնում, որ ներկա դարի մարտահրավերները հաղթահարելու միջոցով է Ֆրանսիայի համար առավել ցայտուն դարձել Ռումինիայի իրական արժեքը: Այս համոզնունքը փաստարկելու համար դը Գոլը կիրառում է *mais* գիշօնան կապակցորդը (Il y a bien longtemps que nos deux peuples sont amis. Mais c'est surtout au cours des grandes épreuves de ce siècle qu'on a apprécié, en France, toute la valeur de la Roumanie). Այս պարբերության հաջորդ հաստվածում դը Գոլը խոսում է այն մասին, որ ֆրանսիացիները հասկանում են, թե ինչ կորուստներ են կրել եւ ինչ զոհաբերությունների են դիմել ռումինացիները եւ գնահատում են, թե ինչ քաջությամբ են նրանք դա արել: Դը Գոլը Ելույթում նաեւ խոսում է այն մասին, որ այդ պայքարի արդյունքն արդարացված է եւ գործածելով *bien que* գիշօնան կապակցորդը փաստարկում է, որ իր համոզնունքը պայմանավորված է այն հանգամանքով, որ ռումինացիները չնայած անգամ տարածքային կորստին, ոչ միայն պահել, այլև ամրապնդել են իրենց ինքնությունը (Nous savons que la Roumanie, bien que réduite dans sa superficie, en est sortie plus roumaine que jamais). Ելույթի տեքստի երրորդ պարբերությունում [3] դը Գոլը վերահստատում է, որ այցն իրեն ուրախություն է պատճառել՝ հատկապես, եթիւ ինքը տեսել է այն առաջնորդացը, որ առկա է երկրի ամենատարելի բնագավառներում: Իր այս միտքը փաստարկելու համար նախազահը գործածում է *car* բացատրման եւ ճշգրտման կապակցորդը (Je suis heureux d'être venu. Car, à côté des belles et nobles choses que le passé vous a léguées, j'ai vu quels progrès modernes vous êtes en train d'accomplir, dans l'industrie, l'agriculture, l'enseignement, la technique). Լարանին առավել վստահեցնելու համար, որ ֆրանսիան լիովին ողջունում է Ռումինիայի հաջողությունները, նախազահը դը Գոլը իր Ելույթի այս հատվածում դիմում է առավել ազդեցիկ փաստարկի օգնությամբ՝ դրա համար կիրառելով փաստարկման միանգամից երկու լեզվարտահայտչամիջոց՝ *mais* եւ *aussi* կապակցորդները ([...] Mais aussi j'ai vu votre peuple, fier, actif et bien vivant [...]). Ելույթի տեքստի նույն պարբերությունում դը Գոլը կարեւորում է Ռումինիայի զարգացումը, իր այդ համոզնունքը փաստարկելու համար նա Ելույթի ազատությունը պայմանավորում է յուրաքանչյուր առանձին ազգի անկախությամբ եւ համագործակցությամբ՝ հանուն խաղաղության եւ առաջնորդացի ([...]) la France qui, depuis toujours et surtout aujourd'hui, aime et estime la Roumanie ; la France qui souhaite ardemment la voir forte et prospère ; la France qui compte la trouver à ses côtés afin d'aider notre Europe à respirer enfin librement, grâce à l'indépendance de chaque nation, à la fin des blocs opposés, à la franche coopération établie d'un bout à l'autre pour la paix et pour le progrès). Տեքստի վերջին [4] պարբերությունում դը Գոլը համոզնունք է հայտնում, որ իր նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքն արտացոլում է այն վերաբերմունքը, որ գոյություն ունի Ֆրանսիայի համեմեա եւ փաստարկելու համար այն համոզնունքը, որ այդ վերաբերմունքը շատ կարեւոր է ինչպես իր, այնպես էլ երկրի համար՝ դիմում է հուզարտահայտչական միջոցների եւ ընդգծում, որ գգացված է մինչեւ հոգու խորքը (Je suis touché jusqu'à plus profond de mon âme par votre accueil, par la façon dont la France, en ma personne, a été reçue chez vous [...] ).

Դը Գոլի այս Ելույթի բոլոր չորս պարբերությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամբողջ տեքստում, իսկապես, նախազահը լսարանին է փոխանցում

կոնկրետ ուղերձներ եւ դրամբ նրա համոզմունքների մասը դարձնելու համար գործառում տարրեր փաստարկներ:

Եվ այսպես, ըստ գիտական գրականության, քաղաքական ելույթների տեքստերի կառուցվածքը, որպես կանոն, բաղկացած է երեք հիմնական մասից՝ նախաբան, հիմնական մաս եւ եզրակացություն: Դրանցից յուրաքանչյուրն ունի կոնկրետ ու որոշակի գործառույթ:

- **Նախաբան** (*exordium, narratio*) նպատակ ունի գրավել լսարանի ուշադրությունը, նաև հիմնավորել նրա ընտրությունը, այսինքն լսարանին պատրաստել հետագա տեղեկությունն ընկալելու համար:
- **Հիմնական մասը** (*argumentatio: confirmatio/refutatio*), որպես քաղաքական խոսույթի կառուցվածքային միավոր, ներառում է նյութի շարադրանքը եւ փաստարկումը: *Տեղեկության շարադրանքի համար հիմնականում կիրառվում են ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները:*
- **Քաղաքական ելույթների վերջաբան** (*peroratio*) իրենից ներկայացնում է խոսողի հետահայաց վերլուծությունը, որ վերադառնում է հիմնական մասի կարենորագույն դրույթներին եւ կառուցում վերջաբանը, որպես դրանց մասին հիշեցում: Քաղաքական ելույթի տեքստերին բնորոշ է շոշանակային կրկնության գործառումը. Ելույթի վերջին հատվածը գրեթե միշտ կրկնում է նախաբանի համպատասխան հատվածները (Ալեքսեև 2001:15):

Ֆրանսիայի 5-րդ հանրապետության նախագահների ելույթների տեքստերի մեր ուսումնասիրությունը, սակայն, ի հայտ բերեց եւս մեկ ուշագրավ երեւույթ: Փաստարկումը դիտարկելով տեքստի կառուցվածքի մակարդակում, կարող ենք եզրակացնել, որ քաղաքական գործիքներն իրենց համոզմունքները փաստարկելու համար ոչ թե ընտրում են ելույթի կոնկրետ ու որոշակի հատվածը, այլ փաստարկումն առկա է քաղաքական ելույթի ամբողջ տեքստի մակարդակում սկզբից մինչեւ վերջ:

Աստեղախոսության **Ամփոփում** բաժնում ներկայացված են այն եզրակացությունները, որոնց հանգել ենք թեմայով հետազոտության արդյունքում.

1. Փաստարկումը «նոր հօետորության» հիմքն է եւ այն տրամաբանությունից, սոցիոլոգիայից ու հոգեբանությունից զատ, մեծապես նաև լեզվաբանության ու մասնավորապես գործարանության ուսումնասիրման առարկան է: Ինչպես ու ինչ միջոցներով փաստարկելու հարցն այսօր ժամանակակից լեզվաբանության ուշադրության կենտրոնում է:
2. Լեզվում փաստարկման տեսության վարկածն այն է, որ փաստարկող բառերը սահմանազատում են փաստարկները տեքստային տարածքում՝ լսողին ստիճանով հանգել կոնկրետ եզրակացությունների:
3. Քաղաքական խոսույթը միջգիտակարգային երևույթ է և քաղաքագիտության ու այլ հասարակական գիտություններից զատ գտնվում է նաև լեզվաբանության ուսումնասիրության առանցքում, քանի որ այն իրականացնում է խոսողական-ներգործական գործառույթ:

<sup>1</sup>Алексеев А.П. Аргументация. Познание. Общение. - М.: Изд-во МГУ, 2001.

4. Քաղաքական խոսույթին հատուկ են փաստարկման հետեւյալ լեզվարտահայտչամիջոցները՝ ներակա փաստարկումը, եղույթների վերասահմանումը, հօետորական հարցը, միջանկյալ նախադասությունները, ժամանակի, տարածական, թվարկման կամ գժային ներառման, գրույշի կառուցվածքային, վերաձեւակերպման, զիջնան, բացատրման եւ ճշգրտման, փաստարկի պարզ ու վարկածային կապակցողները:
5. Քաղաքական ելույթների տեքստերի գորգահեռ կառուցվածքն ու բառակրկնության հնարքը քաղաքական գործիչները կիրառում են ոչ միայն իրենց խոսքին ոճաբանական առանձնահատկություն հաղորդելու, այլև՝ փաստարկելու նպատակով։ Ըստ այդմ, փաստարկման արդեն հայտնի միջոցների շարքը կարելի է համարել փաստարկման նոր վարկածով, որը լիովին կարող է կրել «գորգահեռ փաստարկում» անվանումը եւ պնդել, որ «գորգահեռ փաստարկումը» եւս բնորոշ է քաղաքական խոսույթին։
6. Քաղաքական գործիչներն իրենց համոզմունքները փաստարկելու համար ոչ թե ընտրում են իրենց ելույթի կոմիկետ ու որոշակի հատվածը, այլ փաստարկումն առկա է քաղաքական ելույթի ամբողջ տեքստի նակարդակում՝ առաջին պարբերությունից մինչեւ վերջին։ Փաստարկման դրսեւրումները տեքստի կառուցվածքի մակարդակում, սակայն, կարող են արժանանալ առավել մանրազնին հետազոտության եւ դաշնալ ուսումնասիրության առանձին թեմա։
7. Քաղաքական խոսույթում մեր ուսումնասիրած փաստարկները թույլ են տալիս եզրահանգել, որ քաղաքական խոսույթին առավել բնորոշ են համատեքստային, քան թե համընդհանուր, համագործակցային, քան թե բանավիճային փաստարկները։ Սակայն հարկ ենք համարում նշել, որ քաղաքական խոսույթում փաստարկների տեսակները եւս կարող են արժանանալ մանրազնին հետազոտության եւ դաշնալ ուսումնասիրության առանձին թեմա։
8. Քաղաքական գործիչները պետք է առավել մանրակրկիտ ուշադրության արժանացնեն փաստարկման լեզվարտահայտչամիջոցների ընտրությունը՝ իրենց ելույթներն արժանահավատ փաստարկներով կառուցելու նպատակով։ Այս հետազոտության արդյունքները կարող են այստանի լինել հայ քաղաքական գործիչներին՝ լեզվական տեսանկյունից իրենց քաղաքական ելույթների փաստարկման ձեւաբանումների առումով։

**Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. Քաղաքական խոսույթի առանձնահատկություններն ու սոցիալ-քաղաքական փաստարկումը // ԿԱՆԹԵԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «ԱՍՈՂԻԿ» հրատարակչություն, N 3 (56), 2013, էջ 79-85:
2. Փաստարկման հիմնահարցերը լեզվաբանական դիտանկյունից // Ռոմանական բանասիրության հանդես, Երևան, «ԵՊՐ» հրատարակչություն, N 10, 2013, էջ 181-187:
3. Փաստարկման լեզվաբանական վերլուծությունը խոսույթում // Բանբեր Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Բանասիրություն, Երևան, ԵՊԼՀ «ԼինգվԱ» հրատարակչություն, N 1(28), 2013, էջ 252-263:

**АЛИК ВАРДОВИЧ АКОПЯН**

**ЯЗЫКОВЫЕ СРЕДСТВА АРГУМЕНТАЦИИ  
В ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ**

Диссертация на соискание ученой степени  
кандидата филологических наук

по специальности 10.02.08 "Романские языки"

Защита состоится 18-го февраля 2015 г., в 11:00, на заседании  
специализированного совета 009 ВАК РА, действующего в Ереванском  
государственном университете (Ереван, Алека Манукяна1).

**Резюме**

Работа посвящена изучению особенностей аргументации и языковых  
средств ее выражения в политическом дискурсе.

**Целью** диссертации является выявление языковых средств аргументации в  
речи первых лиц 5-ой Республики Франции с точки зрения теоретико-  
прагматического осмыслиения таких важных научных сфер как аргументация и  
политический дискурс.

Для достижения поставленной цели в работе ставятся и решаются  
следующие **задачи**:

1. Изучить существующие теории аргументации как в рамках лингвистики, так  
и других гуманитарных наук.
2. Исследовать концепцию "дискурс" с лингвистической точки зрения.
3. Выявить языковые средства аргументации, характерные для политического  
дискурса.
4. Классифицировать языковые средства аргументации, используемые в  
политическом дискурсе.

**Актуальность** диссертации обусловлена тем, что сегодня чаще, чем когда-либо, битвы ведутся в информационной поле, нежели на поле битвы. В контексте актуального геополитического развития речь является одной из самых важных средств, используемых политиками для достижения определенной цели. Сегодня, благодаря развитию СМИ, речь, звучащая даже в самой маленькой аудитории, может получить широкую огласку, и ее автор соответственно должен уделять особое внимание аргументативному потенциалу своей речи. Без правильной и обоснованной аргументации в настоящем потоке информации невозможно представить эффективность политической речи.

**Научная новизна** диссертации заключается в том, что впервые проводится исследование языковых средств аргументации, типичных для французской

политической мысли. Впервые использование опыта французской школы прагматики и анализ аргументации в дискурсе позволяют определить ее теоретические основы и представить практическое значение аргументации в политическом дискурсе. Новым является также классификация языковых средств аргументации, включающая в частности новый тип так называемой параллельной аргументации.

**Теоретическая ценность** диссертации состоит в том, что она позволяет по-новому оценить роль и значение анализа дискурса в лингвистике текста. В данной диссертации политический дискурс рассматривается как весьма интересная и плодотворная сфера исследования, которая оперирует не только лингвистическими и политологическими, но и психологическими и социологическими концептами. Проведенное исследование теоретически важно еще и потому, что оно акцентирует значимость лингвистического осмысления аргументации в дискурсе и проливает свет на определенные аспекты прагмалингвистики.

**Практическая значимость** исследования заключается в том, что полученные результаты могут быть включены в теоретические курсы по аргументации, прагмалингвистике и лингвистике текста, использованы в магистрских программах, в дипломных работах, а также в учебниках и учебных пособиях по данной проблематике. Результаты могут также оказаться полезными в практике составления политических выступлений, способствуя развитию аргументативного потенциала текста политического дискурса.

**ALIK V. HAKOBYAN**

## **LINGUISTIC MEANS OF ARGUMENTATION IN POLITICAL DISCOURSE**

Research paper for acquisition of scientific degree in the field of philological sciences, with specialization in 10.02.08 "Romanic languages".

The defence of the dissertation will take place on the  
18<sup>th</sup> of February , at 11 p.m. in  
Yerevan State University (Yerevan, Alek Manukyan 1).

### **Summary**

The **research** explores the peculiar features of argumentation in the context of political discourse with special reference to its linguistic expression in speech.

The **aim** of the research is to identify the linguistic means of argumentation in speeches of the first figures of 5<sup>th</sup> Republic of France for the theoretical and pragmatic study of two important research fields; argumentation and political discourse.

To achieve the goal of the research the following **objectives** have been set forth:

1. study the theory of argumentation both within linguistics and other social sciences;
2. analyze the concept of "discourse," particularly in terms of its linguistic features;
3. identify the linguistic means of argumentation in political discourse and carry out their linguistic analysis;
4. classify the linguistic means of argumentation in political discourse.

The **topicality** of the paper is first and foremost conditioned by the fact that today, even more often than before, battles take place in the field of information, rather than in the field of war. In the context of current geopolitical developments a well uttered speech is one of the most important means on the way to achieving victory, and that is especially used by politicians. Due to media development, the speech uttered even for a small audience can get a lot of publicity today, so the author has to pay special attention to the argumentative potential of his speech. Without proper and reasoned arguments, in conditions of current information flows, it is not possible to imagine effectiveness and productivity of political speech. This accounts for the importance of argumentation analysis which is the subject of the present research.

The **novelty** of the research is provided by the fact that the analysis of the linguistic means of argumentation characteristic of the French political thought is undertaken for the first time. Proceeding from the traditions of the French school of pragmatics and discourse analysis, we define the theoretical essence of argumentation and show the practical value of political discourse against the background of the theory of argumentation. Another novelty of the research consists in a classification of the

linguistic means of argumentation and identification of what we describe as parallel argumentation.

The **theoretical importance** of the work is manifested in the fact that it contributes to the theory of text linguistics by enhancing the role and importance of the discourse analysis. In the present paper political discourse becomes a separate branch of study which operates with not only linguistic and political, but also psychological and sociological concepts. The other theoretical value of this paper consists in the fact that it stresses out the indispensable role of studying the linguistic expression of argumentation to understanding political discourse and spreads light on some aspects of pragmalinguistics.

The **practical** value of the dissertation is embedded in the fact that the results obtained can be used not only in the sphere of linguistic study, but also in pragmalinguistics, as well as text linguistics. They can also be applied in different master's programs related to political discourse and argumentation, in diploma research, in textbooks and manuals on political discourse. They can be of practical use in compiling political speeches and help developing the argumentative potential of political discourse.

A handwritten signature in black ink, appearing to read "Natalia Slobodcikova", with a date "25" written below it.